

ճշմարիտ դատաստան ընել՝ կամ խելամուտ լինել,
Թող այսպիսի Վարդապետարանէ մը ճանաչեն կամ
ուսանին՝ զոր Ազգային Հոգեւոր ժողովը քննէր է եւ
ընդունէր, եւ զոր մեր Սուրբ Եկեղեցւոյ վեհադոյն
Գլխներէն մէկը հրամայէր է որ տապգրուի եւ
բոլոր Ազգային վարժարանաց մէջ ընդունուի : »

ՀԱՆԵԼՈՒԿ.

Ինձմէ անուշ ինչ բան կայ
Երբ ես պոյ ունիմ.
Ինձմէ լեղի ինչ բան կայ
Երբ ես պոյ լունիմ.
Ի՞նչ անէի պարսե կայ
Երբ պոյ գլուխ լունիմ.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ Լուծումը

Մեր արգոյ բաժանորդաց մէկը Տ. Ե. Յ. Հաճեան,
անցեալ ամսուան Հանելուկին լուծումը նրբամիտ
ճարտարութեամբ գտեր է ու առ. մեզ յուղարկեր :

ԱԶԳԱՏԵԱՅՔ

առ. որդիս մեհրուժանայ

Ո՛ր, ձեզ ոչ, չիք, չիք յաջողուած
Ո՛վ ժանաք, առ. ձեզ գոչե Աստուած.
Որ զ Հայրենեացդ ուրանայք սեր,
Եւ ըզնորուն խրնդրէք աներ.
Երկինք ըզձեզ դատապարտեն
Եւ Հայրենիք խոտեն մերժեն :
Ելէք իմենջ իրաց զընայք,
Անէ՛ճք այց չեն ճըշմարիտ Հայք.
Զի կայք իմենջ իրաց իրաց զընայք
Անէ՛ճք այց չեն ճըշմարիտ Հայք : (Իրկնեւ)

Իձեր ճակատ նըսեմաստուեր
Ըզդատակնիք տանիք դուք ձեր.
Իձենջ՝ ո՞վ դուք որդիք Քամայ,
Ամենայն ազգ զարշի սոսկայ.
Ասեն. Դա զձնող իւր անարգու,
Վա՛տ, Հայրենեացն է մատրնուս :
Ելէք իմենջ... եւ այլն.

Օ՛ն անդր.... ընդ մեզ չիք ձեր բաժին,
Խաւար ձեզ ակն ունի յետին.
Մեր Հայկն է հայր (1), Գրիգոր՝ Վանան,
Զեր հեղինակ՝ Սիւնեացն իշխան (2).
Զմեօք աստղ Հայկին յերկնուստ ցոլայ,
Զեզ՝ շանք սլքսակ Մեհրուժանայ (3) :
Ելէք իմենջ... եւ այլն.

(1) Հայկ նախնայր ազգիս, յորոյ անուն պատուեմք զոչոյշոյուն զայն
նամաստեղութիւն՝ զոր օտարք յազգաց Սրխն կոչեն :

(2) Սիւնեաց իշխան, Վասակ սիւնի մարզպան, որ ուրացաւ զհաւատոս
որ իՔրիստոս, եւ մատնեաց զՀայաստան յուսով առնելոյ զնորա քաղա-
ւորութիւն :

(3) Մեհրուժան մատնիչ հայրենեաց եւ հաւատոյ, որ ընդդէմ Հայրե-
նեաց զեն առեալ՝ իմքատայ քաղաքի քաղաքի քաղաքաւորնոյ պա-
կեցաւ հրացեալ շաճիութիւն ընդ հենգս, եւ զարժանի մատնութեան
կրեաց պատուհան :

Կոստանդնուպոլիս, 29 հոկտեմբեր 1858.

Գերապատիւ Տեառք,

Մինչեւ ցայսօր ձեր պատուական ամսագիր Մասեաց Աղա-
նոյն մէջ առաջարկուած Հանելուկները թէ եւ մասնաւորաց
կողմանէ լուծուած ըլլալը տեսնուած չէ, բայց եւ այնպէս
հրատարակելու յօժարելնուդ անտարակոյս ըլլալով, կ'ա-
մարձակիմ այս անգամ վերջին հոկտեմբերի թերթին մէջ եղած
Հանելուկը լուծելով ներկայ գրութեամբս ձեր Գերապատու-
րեանցը իմացունել, խնդրելով, որ երէ արժան դատիք, հրա-
տարակելու բարենձուրիւնը ընէք :

Հանելուկին լուծմունքն է, ԳԱՆԱԿ բառը, որուն երէ
գլուխն ու վիզը այսինքն Գ. Ե. Ա. զորքը մէկտեղ առնումք (ԳԱ)
այբուրենի չորրորդ տառը կ'գտնեմք : Երբոր գլուխը (այսինքն
առաջին զիրը) վերցընեմք՝ մեր սուրբ Լուսաւորչի հայր Անակը
կլիշեմք : Եւ երբ (առաջին զիրը) այսինքն գլուխը չվերցունեմք
այն ժամանակը պէտք է որ վախճումք իրմեն այսինքն
Դանակն :

Մնամ Գերապատիւ Տեառքդ

Խոնարհ ծառայ.

ԵՂԻԱՋԱՐ Յ. ՀԱՆԵԼԱՆ.

LES ENNEMIS DE LA PATRIE

Aux fils de Mèroujan le traître.

Non : pour vous point de succès,
O perfides! c'est Dieu qui vous l'annonce.
Vous qui reniez l'amour de la Patrie,
Qui demandez sa ruine;
Les cieux vous condamnent,
La Patrie vous méprise et vous rejette.
Arrière! loin de nous;
Malédiction sur ceux qui ne sont pas de vrais Arméniens.
Que tardez-vous! éloignez-vous, éloignez-vous de nous;
Malédiction sur ceux qui ne sont pas de vrais Arméniens. (Bis.)

Sur votre front couvert d'opprobre
Vous portez le cachet de votre condamnation,
O fils de Cham! Vous n'inspirez que dégoût à toutes les nations;
A votre vue elles frissonnent,
Elles disent : Le voilà, celui qui méprise la source de ses jours,
Le voilà, le lâche, le traître à sa patrie.
Arrière! etc.

Allez! vous n'avez rien de commun avec nous;
Ce sont les ténèbres dernières qui vous attendent.
Notre père, à nous, c'est Haig (1); Grégoire est notre égide;
Votre guide, à vous, c'est le prince de Sunik (2);
Sur nous respandit du ciel l'étoile de Haig,
Sur vous la broche enflammée qui servit de couronne à Mèroujan (3),
Arrière! etc.

(1) Haig, père de la nation arménienne, a donné son nom à la brillante con-
stellation d'Orion.

(2) Prince de Sunik, (Vassag le traître.) Chef des princes arméniens après la chute
des Arsacides, au v^e siècle, il trahit sa religion et sa patrie dans le but de devenir roi
d'Arménie, grâce au secours des Perses.

(3) Mèroujan, prince arménien qui, dans l'espoir d'obtenir le trône, vendit sa
patrie aux Perses. Mais Sempat, général arménien de la famille Pakradouni à la-
quelle appartenait le droit de couronner les rois, le vainquit et le fit prisonnier.
L'entraînant ensuite dans une chaumière près du champ de bataille, il s'empara
d'une broche enflammée, l'arrondit en forme de couronne et la lui mit sur la tête.

Իբնց, մի՛ ձեռք կտրենք օտարը
Հայքս իբր ըզձեզ իցեմք անարգ .
Ո՛ր, բողոքեան յերկինս արդար
Թե՛ չէք դուք Հայք, չէք մեր եղբայր .
Այլ յանդ մեր սուրբ՝ սերմն որոման ,
Գայլք ժանտ ինօտ անդ Գրիգորեան :
Ելէք իմենց... եւ այլն .

Դուք ծաղր յաղեստ արձակէք մեր.....
Այլ մեր այնչափ հրգօքս եմք դեռ .
Զի առ ստանձնել բեռն ըզվըշտաց
Զունիմք պէտ վատ ձերոց բազկաց .
Այլ հայկաբար ընդ դարս այսքան
Անջինջ տանիմք կնիք զԱզգութեան :
Ելէք իմենց... եւ այլն .

Ո՛հ, խիստ քան զբնաւ աղետաքս այս մեր
Դուք էք, ով ժանաք, Հայոց աւեր,
Դուք քան զոսոյս բնաւ չարագոյն ,
Գազան՝ որ կեայք յԱզգին արին .
Զաղետ, զոսոյս տանիմք կրքնմք ,
Այլ ձեզ՝ ոչ, ձեզ ոչ հանդուրժեմք :
Ելէք իմենց... եւ այլն .

Զի ձեզ անմիտք, զի զուր մըրցիք,
Ո՛վ դուք եւ ով են Հայրենիք.....
Դա յաղբական դարուց կաղնի,
Դուք չոր տերեւքն հոսեալ յերկրի .
Զայդ փորորիկք շարժեցին ոչ,
Դուք դոյզն խիւք կոծիք զողոզ :
Ելէք իմենց... եւ այլն .

Ելէք..... Մասեաց սուրբ հովանի
Մի՛ գձեօք անկցի, չէք արժանի :
Մի՛ գմեր առնուք արեւ, անձրեւ .
Հայոցս է դա յերկնից պարգեւ .
Իսանմանաց սուրբ՝ Եղեմայ
Ելէք ընդ հօր ձեր Սասանայ :
Ելէք իմենց... եւ այլն .

Ելէք, մի՛ գնարց մեր սուրբ զԱնուն
Առնուլ, եւ մի՛ գայր Թրճնուրխն .
Թողէք ըզՄայր զոր ծաղր առնուք՝
Թողէք գաւերսն իւր եւ ըզքուք .
Աւերք նորա են մեր պարծանք .
Ամօք մեր զուք էք ով վիժանք :
Ելէք իմենց... եւ այլն .

Անէճք իզուխդ, անէճք խիբա,
Անէճք յազգիդ դեմ հեղեալ քիրա,
Անէճք իզօրձ ձեր եւ իբան ,
Յամօք եւ ցաւ կեցջիք ծրփան .
Եւ վաղազրաւք յերկիր օտար
Տապանքդ իմուշ ծածկեցին չար.....
Այս է բաժին ձեր այս վերջայլք
Որոց չիցեն ճըշմարիտ Հայք .
Այս է բաժին ձեր արդար այս վերջայլք .
Անէճք ոյց չէք ճըշմարիտ Հայք .
Անէճք ոյց չեն ճըշմարիտ Հայք :

Խ Ո Ր Խ Ո Ր Ո Ւ Ն Ի Ն .

Arrière! Que l'étranger, nous jugeant d'après vous.
Ne nous suppose pas, nous Arméniens, aussi vils que vous;
Non, nous en appelons au ciel équitable :
Non, vous n'êtes pas Arméniens; non, vous n'êtes pas nos frères,
Mais vous êtes, dans notre saint champ, la semence de zizanie .
Vous êtes des loups affamés dans la bergerie de Grégoire .
Arrière! etc.

Vous insultez à nos malheurs.....
Cependant, aujourd'hui encore, nous nous sentons assez foris
Pour porter le poids de nos misères
Sans avoir besoin de vos lâches bras.
En vrais fils de Haïg, depuis des siècles
Nous portons dans nos cœurs le cachet de notre nationalité.
Arrière! etc.

Hélas! plus après que toutes nos calamités,
C'est vous, pervers, qui ruinez la nationalité arménienne;
Vous êtes plus dangereux pour elle que tous ses ennemis,
Tigres qui vous repaissez du sang de la nation;
Nous pouvons supporter toutes les infortunes,
Mais vous, non, jamais nous ne vous supporterons.
Arrière! etc.

Quoi donc, insensés! pourquoi ces vains combats?
Qui êtes-vous, et qu'est la patrie?....
Elle, le chêne triomphant des siècles,
Et vous les feuilles desséchées qui jonchent la terre;
Elle, les ouragans n'ont pu l'abattre; [combez.]
Vous, au moindre souffle qui passe, vous tremblez et vous suc-
Arrière! etc.

Arrière! Que les saintes ombres de l'Ararat
Ne tombent pas sur vous : vous n'en êtes pas dignes.
Ne nous prenez pas notre soleil, notre pluie,
Don des cieux aux fils de l'Arménie.
Quittez les sacrés confins de l'Éden.
Sortez avec Satan, votre père.
Arrière! etc

Sortez; mais n'emportez pas avec vous le saint nom de nos aïeux,
N'emportez pas la bénédiction qui y est attachée.
Laissez la mère que vous insultez,
Laissez l'Arménie, laissez ses malheurs et ses ruines :
Ces ruines, à nous, font notre orgueil!
Notre seul opprobre, c'est vous, ô misérables avortons!
Arrière! etc.

Malédiction sur vos têtes! malédiction sur vos cœurs!
Malédiction sur les sueurs que vous répandez contre votre nation!
Malédiction sur vos œuvres et sur vos discours!
Vous vivrez ballottés entre l'opprobre et la douleur,
Vos jours seront restreints, et ils s'éteindront sur la terre étrangère,
Et vos tombes se couvriront de ronces...
C'est le sort, oui, c'est la fin réservée
À tous ceux qui ne sont pas de vrais Arméniens;
C'est votre juste sort, c'est votre fin;
Malédiction sur vous, qui n'êtes pas de vrais Arméniens.
Malédiction sur ceux qui ne sont pas de vrais Arméniens!

CORÈNE V. CALFA.